

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ Քանակական գիտությունների թեկնածու

ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԲԱՌՈՒ ՊՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Գրերի Գյուտի պատմության երկու գլխավոր սկզբնաղբյուրներն են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Կորյունը գրում է, որ Մաշտոցը, ձեռնամուխ լինելով գրերի ստեղծմանը, իր աշակերտների հետ գնում է Ամիդ և Եղեսիա, ապա, նկարագրելով բուն գյուտը, ասում է, որ Մաշտոցը այնուհետև Սամոսատ գնաց¹:

Խորենացին գրում է, որ Մաշտոցը գնում է Եղեսիա, ապա այնտեղից՝ Սամոսատ, որ և տեղի է ունենում Գրերի Գյուտը²:

Ինչ վերաբերվում է Գրերի Գյուտի մասին գրող հինգերորդ դարի երրորդ պատմիչին՝ Ղազար Փարպեցուն, ապա, ինչպես նշում են գրեթե բոլոր հետազոտողները, նրա պատմության այս հատվածը, որը թերի է և անհասկանալի, ամենայն հավանականությամբ եղծվել է ու որոշակի վերախմբագրման ենթարկվել հետազայում: Ըստ Փարպեցու մեզ հասած այժմյան բնագրի, Հայոց Կուամշապուհ թագավորի պատվերով Վահրիճ անունով մեկը գնում է Միջագետք՝ Հարել քահանայի մոտ, որը մերձավոր գործակիցն էր Դանիել Ասորու և վերջինիցս էլ վերցնում է Դանիելյան անվանված նշանագրերը և դրանք ուղարկում Հայաստան, որ այդ գրերը համապատասխան կարգավորվածության են ենթարկվում և որոշակի գոային համակարգի մեջ դնում Ս. Մեսրոպն ու Ս. Սահակը իրենց աշակերտների հետ միասին³:

Փարպեցու այս հատվածից, որին դեռ կանդրադառնանք, այն տպավորությունն է ստեղծվում, որ Մաշտոցը նշանակալից դեր չի կատարել գրերի ստեղծման հարցում, և որ այս գրերն ել Միջագետքից պարզապես բերվել են Հայաստան: Միաժամանակ, այսպիսվ, անհրաժեշտ է նշել, որ Փարպեցին ևս փաստորեն մատնացուց է անում աշխարհագրական այն տարածքը՝ Միջագետքը, որը կապվում է Հայոց Գրերի Գյուտի հետ: Ահա այս պատճառով Գրերի Գյուտի բուն տեղի հարցում բանափառության մեջ եթե եղել են տարակարծություններ, ապա դրանք վերաբերվել են Ամիդին, Եղեսիային և Սամոսատին, որովհետև թե՛ Կորյունը, թե՛ Խորենացին և թե՛ Փարպեցին հիշյալ երեք քաղաքներն ընդգրկող տարածքն են մատնանշում որպես Գրերի Գյուտի վայր:

Այսպիսով, թեև հիշյալ երեք պատմիչները որևէ հիշատակություն չունեն Գրերի Գյուտի՝ Բալուի հետ որևէ աղերս իսկ ունենալու մասին, սակայն սկսած XI-XII դարերից,

¹ Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխափասիրությամբ Մ. Աբեղյանի, իրավաբակության պարբռասփեց Էմ. Պիլվազյան, Երևան, 1980, էջ 94-96:

² Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, աշխար. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տիֆլիս, 1913, Գիրք Գ, գլ. ԾԳ, էջ 326-327:

³ Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, աշխար. Գ. Տեր-Մկրտչյանի և Սպ. Մալխասյանի, Տիֆլիս, 1904, էջ 14-15:

ապա և առավել ընդհանրացված ձևով XIII դարից ասկում է, թե Գրերի բուն Գյուտը տեղի է ունեցել Բալուի լեռան վրա զտնվող մի այրում:

Առաջինն այս մասին գրում է Կարապետ Սասնեցին, որն, ըստ Աճառյանի, XI դարի հետինակ է, և որից մեզ է հասել միայն մեկ ստեղծագործություն՝ վկայված հետևյալ ծավալուն խորագրով. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ սրբազան եպիսկոպոսի և վարդապետի Կարապետի Սասնացւոյ ի խնդրոյ համազնեալ եղբար ճգնաւորի. Յաղաց վարուց և մահուան սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոբայ թարգմանչի և Լուսաւորչի»⁴:

Սասնեցու այս ներբողյանի պատմական մասը միահյուսումն է Կորյունի, Խորենացու և Փարպեցու հաղորդած տեղեկությունների, որոնց վրա ինքը ավելացրել է մի շարք նոր մանրամասներ, որոնք թեև որևէ արժեք չունեն որպես պատմական սկզբնաղբյուր, սակայն կարևորվում են գրական-մշակութային առումով՝ ցուց տալով, թե Գրերի Գյուտը ինչպես է վերամեկնաբանվել և վերիմաստավորվել միջնադարում: Այս հանգամանքով է բացատրվում նաև ձևավորված որոշակի ավանդություն հետագա մի շարք հետինակների կողմից Գրերի Գյուտը Բալուում ներկայացնելը:

Հայոց գրերի հարցով U. Մեսրոպի՝ U. Սահակին դիմելը Սասնեցին գեղեցիկ ձևով այսպես է ներկայացնում. «Եւ ապա յիշեցուցաներ վեհա [U. Մեսրոպը] վեհագութին [U. Սահակին] զպակասութիւն եկեղեցւոյ իւր»⁵: Ասես «Ո տայր ինձ զծուխ ծխանի»⁶ Աշանավոր խոսքերի հետևողությամբ U. Սահակը «յոզոց հանեալ» պատասխանում է. «Ո՞վ տայր ինձ տեսանել դրոշմ տառի ըստ մերում բառիս»⁷:

Մաշտոցի ցանկությունը Սահակ Պարթևը հայտնում է Վոամշապուհ թագավորին, որը կանչում է Դամիել Ասորուն, որն այստեղ անվանվում է «զիմաստունն Դամիել»: Վերջինս զալով, իր հետ բերում է «զվադուց արարեալ Աշանսն զկրկին տասն և զերկու տասն»՝ այսինքն՝ հնից հայտնի քսաներկու գրերը: Ինչպես Կորյունի մոտ, այնպես էլ այստեղ ասկում է, որ սկզբնապես ուրախանում են երանելիները, ապա և տրտմում, որից հետո U. Սահակը U. Մեսրոպին պատվիրում է զնալ Ամիդ և այստեղ տեղի մասնագետների հետ այդ գրերը հարմարեցնել հայոց լեզվին, որը, սակայն, չի հաջողվում: Մաշտոցը այնուինեւս զնում է Եղեսիա՝ Պղատոն ճարտասանի մոտ, որը ևս չի կարողանում այս գրերը հարմարեցնել հայոց լեզվին և «սրբոյն յուսահատ եղեալ՝ դիմէ ի Սամու, առ Հոռիանոս իմաստասէր և կրօնաւոր»: Վերջինս էլ բավական շանալուց հետո «զպարտութիւն խոստովանէր»⁸:

Եթե մինչ այստեղ Սասնեցին գրեթե բառացի հետևում է հիմնգերորդ դարի մեր երեք պատմիչներին, ապա շարունակությունը արդեն չի հանդիպում նախորդող շրջանի և ոչ մի մատենագրի մոտ: Ըստ Սասնեցու, Մաշտոցը տեսնելով, որ չի կարողանում իր նպատակին հասնել, վերստին տրվում է պահքի և ճգնության, «ընթանալով զառ ի վեր ընդ

⁴ Կարապետ Սասնեցի, Ներբողեան, Վաղարշապափ, 1897, լ. 3:

⁵ Նոյն գիրում, լ. 39:

⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխ. Կ. Կոսդանյանցի, Ալեքսանդրապոլ, 1910, լ. 87:

⁷ Կարապետ Սասնեցի, Ներբողեան, լ. 39:

⁸ Նոյն գիրում, լ. 42:

ափունս Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի դղեակն Պալունեաց»⁹:

Բալուի այս դղյակում նա յոթ շաբաթ, այսինքն՝ Մեծի Պահոց մի շրջան է անցկացնում պահքով և աղոթքով, որից հետո տեսնում է, թե ինչպես «զՏէրն հրեշտակաց՝ մարգարէալան աչաւը, որ գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»: Այստեղ Սասնեկան աչաւը, որ գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»: Այստեղ Սասնեկան աչաւը, որ գրէր մատնագիծ ի սալս սրտի իւրոյ չորեքտասան տառ»:

Այսպիսով, ըստ Սասնեցու, այն գրերը, որոնք աստվածային տեսիլով դրոշմվել են Ս. Մեսոպոտամի սրտի սալին, այնուհետև Մաշտոցը նշանագրում է քարի վրա, և այդ քարը պահպանվել է մինչև ներբողյանի գրության ժամանակը: Նա այսպես է գրում ոչ միայն իր ասածին պատմական վավերականություն հաղորդելու համար, այլև Կորյունի հետևողությամբ կատարելու հետևյալ համեմատությունը: Կորյունը եթե Ս. Մեսորոպին համեմատում էր Մովսես Մարգարեի հետ՝ ասելով, որ Հայոց Այբուբենը բերող Մեսորոպը ավելի երջանիկ էր, քան Սինա լեռից Տասնարանյայի կավեղեն տախտակները իշեցրած Մովսեսը, ապա Սասնեցին Հայոց Այբուբեն-Տասնարանյայի տախտակներ զուգահեռով գրում է. «Առաջին սալն խորտակեցաւ, և երկրորդն վիմաւ ծածկեցաւ, իսկ մերս երկորեանս պահեցան յաւէտ»:

ԺԳ դարում Գրերի Գյուտի մասին երիցս գրում է նշանավոր մատենագիր Վարդան Արևելցին: Իր նշանավոր Աշխարհացուցում նա նշում է. «Աթախն և Հենի, Դերջան և Բալու, ուր զգիրն եզիտ Մեսորոպ վարդապետն»¹⁰:

Գրերի՝ Բալուում տրվելու մասին նա իր Պատմությունում գրում է. «Սուրբն Մեսորոպ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու գիր առ Դանիէլի Ասորու գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալը. և ոչ Մեսորոպ կարէր նոքօք փոխել զԱստուածաշունչ մատեանս ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ Սրբոյն Սահակայ, տալ նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, Աջով իւրով դրոշեալ առաջի նորա, որպէս Մեծին Մովսէսի ի լեառն Սինայ, և սմա ի լեառն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խընկօք և ջահիլք միշտ ի (տաճկաց և քրիստոնէից) բնակչաց տեղույն»¹¹:

Ի տարբերություն Սասնեցու խոսքի բարձրառն և ընդհանուր ներբողականության, Վարդան Արևելցին ասելիքը ձևակերպում է հստակ և պարզ պատմական շարադրանքով: Արևելցին ևս ասում է, որ Դանիէլ Ասորու մոտ կային 24 նշանագրեր՝ մնացած հին ժամանակից: Դրանք կիրառելի չլինելով հայերէնի համար, մոռացության էին մատենվել, և հայերը գրում էին հունարէն, ասորերէն և պարսկերէն լեզուներով: Հատկանշական է, որ Արևելցին գրում է, թե Ս. Մեսորոպը հունարէն, ասորերէն և պարսկերէն գրերով չի կարողանում հայերէն թարգմանել Աստվածաշունչը, որի համար էլ ձեռնամուխ է լինում հայոց գրերի ստեղծմանը: Այսինքն՝ ըստ պատմիչի, հայոց գրերի ստեղծումը թելադրված էր

⁹ Նույն գեղում, լ. 42:

¹⁰ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Փարիզ, 1960, լ. 47:

¹¹ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Ս. Ղազար, 1862, լ. 49-50:

Սուրբ Գրքի, որով և ընդհանրապես՝ եկեղեցական արարողությունների հայերեն թարգմանությամբ:

Սասնեցու հետևողությամբ Արևելցին և գրում է, որ Աստվածային Աջով տրված գրեռը դրոշմված են Բալոի այրում, սակայն ի տարբերություն Սասնեցու, որը գրում էր, թե իր սրտի սալին գրվելուց հետո այնուհետև քարի վրա Ս. Մեսրոպն է դրանք դրոշմել Բալոի այրում, ապա Արևելցին գրում է, որ Աստված իր Աջով է դրանք դրոշմել այրի վեմին, և ասվածին դարձյալ հաջորդում է Մովսեսի և Սինա լեռան հետ տարված զուգահեռը: Եթե Սասնեցին գրում էր, որ գրերով դրոշմված քարը կա մինչև այսօր, ապա Արևելցին արդեն գրում է, որ այն ոչ միայն կա, այլև պաշտամունքի առարկա է թե՛ քրիստոնյաների և թե՛ մահմեդականների համար:

Վարդան Արևելցին հեղինակն է նաև Սրբոց Թարգմանչաց նվիրված հետևյալ ներբողյանի. «Բան պատմագրաբար վասն Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն»¹²: Նկատելի է, որ այս ներբողը գրելիս Արևելցին որոշակիորեն ազդվել է Սասնեցուց: Արևելցին թեև չի գրում, որ Գրերի Գյուտը տեղի է ունեցել Բալուում, քայց և միաժամանակ Գրերի Գյուտի կատարման համար որևէ վայր չի մատճանշում: Ավելին, նա գրում է, որ Ս. Մեսրոպը ո՛չ Ասորիքում, ուր Դանիելն էր, և ո՛չ Էլ Ուոհայում (Եղեսիայում) Եպիփան ճարտասանից չկարողացավ ստանալ իր ցանկացածը, որը բացատրվում է հետևյալ հոգևոր վերիմաստավորմամբ. «Եւ այս վերնական խնամոցն տնօրէնութիւն, զի ելք իրացն լիցի յԱստուծոյ և ոչ ի մարդկանէ, որպէս հնոյն իսրայէղի յԱստուծոյ պարզենեալ գիր արինացն ի ձեռն Մովսեսի: Եւ այս մեծագոյն շնորհ ընձեռեալ ազգիս մերոյ յԱստուծոյ»¹³: Համաձայն նման մեկնաբանության, եղած գրերը հնարավոր չեր լինում հարմարեցնել հայոց լեզվին, քանի որ Հայոց Գրերի Գյուտը վերապահված էր Աստծուն:

Նույն ԺԳ դարում Բալուի այս ավանդությունը իր արտացոլումն է գտել նաև Մխիթար Այրիվանեցու «Սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ» գանձում, ուր ևս շեշտվում է, թե հայոց գրերը գտնելու ջանքերը գուր եղան, և Գրերի Գյուտը վերապահված էր Աստծուն.

Բազում աշխատեալ, և ոչինչ աւգտեալ, ձեռն յԱստուած ձգեալ,
ի Բալու տքնեալ, Մեսրոք արտասուեալ, աստ հրեշտակ իշեալ¹⁴:

Բալուի մերձակա լեռը կոչվում է Ս. Մեսրոպ, որի վրա գտնվող ուրարտական հին բերդի այրերից մեկի վեմին, համաձայն ավանդության, դրոշմվել են հայոց գրերը: Այս ավանդությունը Բալուում պետք է տարածված լիներ գոնե ԺԲ դարում, որովհետև ԺԳ դարի վերջում այստեղ արդեն կար Ս. Մեսրոպ եկեղեցին: Այն հիշվում է Գրիգոր վարդապետ Բալուեցու վկայաբանությունում: 1290 թ. կատարված նրա նահատակության պատմությունը բերված է «Յայսմատուրի» մի շարք օրինակներում և գտնվում է հոդիի 4-ի և փետրր-

¹² Տե՛ս «Բանրեր Մագիստրադանի», 1964 թ., հմ. 7, լ. 377-397 (աշխար. Փ. Անթարյանի): Տե՛ս և «Սովորք Հայկականը», հգ. Բ, Վենեսպիկ, 1853 թ.:

¹³ Նույն դեղում:

¹⁴ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և լրադեր, աշխար. Է Հարությունյանի, Երևան, 2005, լ. 113:

վարի 10-ի ներքո: Վկայաբանության հեղինակն է Գրիգոր Բալուեցու քրոջ որդին՝ Ռավիթ երեց Բալուեցին, որը նրան աշակերտել է և ականատես եղել նրա նահատակությանը¹⁵:

Այս վկայաբանությունում ասվում է, որ նա Բալուից գնում է «յԱյրարատեան զատոն» ի վաճառ Վիրապի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ առ հոչակատոր իմաստաեր վարդապետն հայոց Վարդան»¹⁶:

Այնուհետև վերադառնալով Բալու, այստեղ ընդունվում է մեծ պատվով, և նրան հովվության են տալիս «զսուր Մեսրոպայ աղօթանոցն և կայարանն...»¹⁷:

Այսպիսով, Ս. Մեսրոպի վաճառը նվազագույնը 1290 թ. արդեն հիշվում է և ընդ որում հիշվում է ոչ թե որպես նորակառուց, այլ Բալուի գլխավոր սրբավայր, որից կարելի է եզրակացնել, որ այն շատ ավելի վաղ է կառուցվել:

Գրերի Գյուտի՝ որպես թե Բալուում կատարվելու ավանդությունը իր աստիճանական արտացոլումն է գտել նաև «Յայսմատուրք»-ում: Այս ժողովածուի առաջին երկու խմբագրություններում եթե տրեի 17-ի և նոյեմբերի 25-ի ներքո հիշվող տոնը անվանվում է «Թարգմանութիւն Սրբոյն Խսահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն և գիւտ գրոցն և յիշատակ Սրբոյն Պետրոսի Աղէկսանդրու Հայրապետին»¹⁸, ապա այս ժողովածուի՝ Գրիգոր Շերենց Խլաթեցու խմբագրության այս օրվա պատմության վերնազիրն է «Գիւտ գրոյն հայոց ի Բալու»¹⁹:

Գրերի Գյուտի պատմությունը թեև հիմնականում նույնն է վերը հիշված երկու ձեռագրերում էլ, սակայն երկրորդի վերնագրում հստակորեն շեշտվում է, որ այս տոնը նվիրված է Բալուում կատարված գյուտին, ինչպես նաև բուն վերնագրից հանվել է Պետրոս Հայրապետին նվիրված հիշատակությունը, համառոտվել է նրա պատմությունը և այն այս օրվա վերջում հիշվում է միայն մեկ նախադասությամբ. «Յայսմ աւուր վկայաբանութիւն Սրբոյն Պետրոսի Աղէքսանդրու պատրիարքին և Աքիսողոմայ սարկաւագին»²⁰:

Ինչ վերաբերվում է Գրերի Գյուտի պատմությանը, ապա ինչպես ասացինք, այն հիմնականում նույնն է երկու ձեռագրերում էլ, որը վկայում է, որ Գրերի Գյուտի պատմության Հայսմավուրքային տարբերակում ևս հենց սկզբից եղել է որոշակի միտում Գրերի Գյուտը չկապել Ամիդի, Եփեսոսի և Սամոսատի հետ: «Յայսմատուրք»-ում բերվող պատմությունը ևս հիմնաված է Բալուի մասին գրող նախորդ շրջանի մատենագիրների գործերի վրա: Բուն շարադրանքում թեև Բալու տեղանվան հիշատակությունը չկա, սակայն դարձյալ հստակորեն ասվում է, որ Միջազետքի տարբեր քաղաքներում Ս. Մեսրոպը չկարողանալով գտնել Հայոց գրերը, այնուհետև վերստին տրվում է պահքին ու աղոթքին և «Տեսաներ, զի թաթ ձեռին Աջոյ գրեր ի վեմն, որ հանդէպ կայր նմա: Եւ փորուած գրին որպէս ի ձեան տպաւորէր ի վերա վիմին: Եւ հանգամանք գրոյն և անուանքն ի միտսն Մեսրաւայ տպա-

¹⁵ Տե՛ս Հայոց նոր վկաները, աշխար. Ռ. Մանանդյանի և Ռ. Աճառյանի, Վաղարշապար, 1903, լ. 117:

¹⁶ Նույն փեղում, լ. 105:

¹⁷ Նույն փեղում:

¹⁸ Մաշփոցի անվան Մաքենադարան, ձեռգ. հմք. 2695, ԺԴ դ., 42ր:

¹⁹ Մաշփոցի անվան Մաքենադարան, ձեռգ. հմք. 4472, 1452-1457 թթ., 192ր:

²⁰ Նույն փեղում, 4472, 193ր:

տրեր»²¹:

Բալուի ավանդությունը արտացոլվել է և հայկական ձեռագրերի հիշատակարաններում: Ինչպես հայտնի է, գրիչները, ավարտելով ձեռագրերը, նշում էին, թե այն ո՞ր թվականին և որտեղ գրվեց՝ բնորոշելով իրենց ապրած ժամանակը և այն վայրը, որտեղ իրենք գրել են այդ ձեռագիրը: Համանման ձևով 1468 թ. Բալուում ընդօրինակված Մաշտոցի հիշատակարանում ասվում է, որ այս ձեռագիրը գրվել է.

Յամուր դղեակս երևելի,
Որոյ անուն Բալու կոչի,
Ըստ հովանեաւ Սուրբ Աստուածածնի,
Որ Հաւավանք վերակոչի,
Աթոռ մերոյ հայրապետի,
Հրեշտակատիա տիա տեմչալի
Մեսրովա անուն վարդապետի...²²

Այս հիշատակարանում, ինչպես տեսնում ենք, Բալուն անվանվում է անգամ U. Մեսրոպի աթոռ, որովհետև, ըստ նրա հետ կապված ավանդության, այստեղ է ճգնել և հայոց գրերը արարել U. Մեսրոպը:

Համանման ձևով Ստեփանոս արքեպիսկոպոսը 1481 թ. Խարբերդում ընդօրինակած իր Շարակնոցի հիշատակարանում Բալուի մասին գրում է. «ի յերկին Բալուայ՝ աղաւատեղն Մեսրոպայ»²³:

Այս ըմբռնումը ընդհանրանալով արտահայտվել է և ժամանակագրություններում: 1673 թ. վախճանված Պավիթ Բաղիշեցին «Շաղկաքաղ արարել ի բազում պատմագրաց» խորագրված իր ժամանակագրությունում գրում է. «Յայս ժամանակի Մերովա սքանչելի այրն Աստուծոյ եզիտ զձայնաւոր գիրսն, տուելովն Աստուծոյ ի վիմին տպաւորեալ ի Բալու»²⁴:

Այս ավանդությունը ներառվել է նաև հայ ուխտավորության երթուղիներում՝ դառնալով ուխտագնացության կարևոր կայաններից մեկը, իր կնիքը թողմելով և այդ ուխտագնացություններից ծնվող ուղեգրական երկերի վրա: Մեր քննած հարցի տեսանկյունից այս ուխտագնացությունները կարևորվում են նաև նրանով, որ եթե նախորդ շրջանի մատենագրական երկերում առավելաբար ներբողվում էր Բալուն²⁵, և կամ էլ Բալուի այրը ներկայացվում էր Հայոց գրերի Աստվածային Աջով տրվելու՝ Խորենացու «Հայոց պատմության» հետևողությամբ, գեղարվեստորեն պատկերվելով ըստ այդ հեղինակների ստեղծա-

²¹ Նոյն փեղում, 193ա, փե՞ս և Ս. Էջմիածնի ձեռագրավուն, ձեռգ. հմք. 74, 166թ:

²² ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, լզ 276:

²³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, լզ 11:

²⁴ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հր. Ռ, կազմեց Վ. Ա. Դակորյան, Երևան, 1956, լզ 326:

²⁵ Միակ բացառությունը Վարդան Արևելցու Պատմության համապատասխան հարվածն է, որ նկարագրված է անգամ այրը: Կարելի է ենթադրել, որ Արևելցին ինքը անձամբ է եղել այնպես և կամ էլ այս ավանդությունը լսել՝ անցնելով այդ վայրերով:

գործական երևակայության, ապա ուղեգրական երկերում արդեն ականատեսերի կողմից է նկարագրվում Բալոի Ս. Մեսրոպի այրը:

Ս. Մեսրոպի այրի առաջին ծավալուն նկարագրությունը գտնում էնք 17-րդ դարի մատենագիր Սիմեոն Լեհացու Ուղեգրությունում: 1608 թ. նա Լվովից սկսում է իր ուխտազնացություն-ճանապարհորդությունը՝ այցելելու Եվրոպայի, Երուսաղեմի ու Հայոց աշխարհի մի շարք սրբավայրեր, լինելով նաև Բալուում, որի մասին գրում է. «Եւ էր Բալուն իբրև կղզի, զի Եփրատն բոլորեալ էր զնայ, սակաւ մի ցամաք մուտ ունի. և ուներ բարձր անաղիկ բերթ մի, որպէս Օսմաննուխին. և կայր անդ եկեղեցի մի և աղօթատեղ Մեսրոպ վարդապետին, զոր մտեալ ի ներքս՝ աղօթեցաք, մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ և մեր ննջեցելոց: Եւ հանդէա նմին կանգնած վէմ մի կայր, որպէս տապան հրէից և ի վերայ գիր, զոր ոչ կարացաք ընթեռնով, և ասէին, թէ այս նշանագիրըն են, որ յԱստուծոյ տուաւ հայոց»²⁶:

Բալուն հիշվում է և Հայոց աշխարհի սրբավայրերի՝ Կոմիտաս Քյոմուրճյանի 1694 թ. կազմած քարտեզում, ուր ասվում է. «Բալու. եպիսկոպոսարան, գուբ և քարն գրոյն և զերեզման ի մէջ բերդին. Սուրբ Մեսրոպ կոչի»²⁷:

Գնալով ավելի ու ավելի նվիրական մի սրբավայր դարձող Բալոի Ս. Մեսրոպի այրը նկարագրել են նաև 19-րդ դարի ուղեգրողները և հեղինակները:

1860-ական թթ. Բալուի առաջնորդական փոխանորդ եղած Պողոս ծ. Վրդ. Նաթանյանը Բալուի լեռան մասին, որի վրա է գտնվում և Ս. Մեսրոպի այրը, գրում է. «Այս լեռը թէպէտ հիւսիսային կողմէն ելլելու ատեն այնչափ բարձր չերևիր, բայց երբ որ քաղաքի մէջէն դէպի վեր նայիս նոյն լեռան այնքան բարձր ըլլալուն, կը զարմանաս բնութեան այդ հսկայական ամբարտակին վրայ: Եւ Բալուայ քաղաքի հիւսիսային կողմ ի մքնաբոյս բարձր ապահով քարէ իր վրայ հեթանոսական ժամանակներէ մնացած տակաւին բերդեր կան. այժմ կիսակործան: Հաւանականաբար կը պատմեն, թէ ժամանակին քաղաքը նոյն բերդին մէջ հաստատուած է եղեր, զի բնակութեան հետքերը կը տեսնուէին ցարդ. արևմտեան կողմը բարձր մը քարի մը վրայ սեպածնի նման տեսակ մը գրուած գրեր կային, որուն օրինակը կամ պատկերը առնելու համար շատ աշխատութիւն կրեցի, բայց տեղին անյարմարութիւնը չի ներեց ի կատարում ըղձիցս: Ներքեւ դրան պէս մի տեղ կայ, որ կ'առաջնորդէ ըստ բարեկանական քարէ փորուած մի քանի մեծ սենեակները, որոց մէկուն մէջ գերեզմանի ձևով մի քար կայ՝ աւանդութեամբ Ս. Մեսրովբայ գերեզման կանուանուի ի վաղուց անտի մինչև ցայսօր. և տեղացի հայ բնակիչը երբեմն երբեմն ուխտի կ'երթան հոն և կը պնդեն աւանդութեամբ, թէ հայոց գրերը հոս գտնուեցան»²⁸:

Բալուի նկարագրությունների բարձրակետը, սակայն, Գարեգին եպիսկոպոս Սրբաձրտյանցի ուղեգրական հետևյալ հատվածն է. «Հին և վիթխարի պարսպաց աւերներ ու բեկորները կոխելով վեր կ'ելնենք. քայքայեալ մեծ դոնէ մը կը մտնենք միջնաբերդը, ուր շտեմարանաց և սենեկաց աւերածներ, գետնայարկ կամարափուլ շէնքերը մէկը միւսին ետև կը ներկայանան մեզ. դեռ ողջ է զնդանատունը և մի քանի սենեակ, բայց ասոնք քան

²⁶ Սիմեոն դպիր Լեհացի, Ուղեգրութիւն, իրդ. Ռ. Ա. Ակինյան, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1934, լ. 159:

²⁷ Gabriella Uluhogian, Un antica mappa dell' Armenia, Bologna, լ. 133:

²⁸ Պողոս ծ. Վրդ. Նաթանեան, Վրփուր Հայաստանի կամ գրեղեկագիր Բալուայ, Քարբերդի, Զարսանճագի, ճապաղ ջուրի և Երզնկայու, Կոստանդնուպոլիս, լ. 26-27:

մը չեն արժեր իմ աշքին: Կը դառնանք ի հիւսիս, ուր ապառաժ և լեռջ քարեր են մեծամեծ, իոն եզերքին վրայ քարին երեսը տաշուած, վրան բնեռագիր անեղծ, մաքուր, 22 տող վերը և 7 տող վարը քանդակուած, մէջ տեղը բաց ձգուած էր, ուր տող մը արաբերէն զիր փորագրած էին. Այս «Գրման քարի» կողէն զարի վայր, նեղ, սանդղաձև, գրեթէ մրջման շափով իշանք քարայրի մը բերան, որոյ մէջ փոքրիկ քարայր մի ևս կայ, երկութին ալ առաստաղն ու պատերը սկցած, երկութի մէջն ալ բեմի պէս անկոփ քարերով շարուածք, և պատերուն վրայ բազմաթիւ խաչեր փորուած: Ահա Ս. Մեսրովբայ ճգնարանն, ըսաւ Տէր Մեսրովբն:

Ծունկներուս վրայ ինկայ, իոն, ուր Սրբոյն ծնկները մաշուած էին, լգեցի այն քարեր և փոշիները, յորս շրթունք և ճակատ Սրբոյն բիւրից քսուեր էին նովիրելով իր խորհուրդն և իղձերը Աստուածային իմաստութեան. իոն դրի երեսներս, և չէի ուզեր վերցնել այն ժայռերէն, ուր նստեր, կոթներ, խոկալով և տքնելով Հայ ազգին և Հայաստանեայց եկեղեցւոյն լոյս և կեանք ճարելու ճգնութեամբ...: Քա՛ր, ո՞ քարայր, Հայոց արևուն լուսնակամար, ուստի ծագեցաւ մեզ ճառագայթ դպրութեան. «Յոր խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին ճկարագրեցաւ մեզ զիր կենդանի յարզանդ մաքուր մեծին Մեսրովբայ, անմատոյց լուսոյն երկրպագեցուք»: Կից քարայրիս, արտաքոյ դրան, կայ մի տաշածոյ երես մեծ գրատախտակի նման, արդեօք Հայ տառերը ձևակերպելու տախտա՞կն էր Սրբոյն: Ինչպէս նաև երկու այլ քարայրեր, որոց առաջինն աւելի լուսաւոր և ընդարձակ է, ունի սրան մը, և երկրորդն՝ կրկին պատերով սենեակ մը, որոյ առաջին սենեկէն ներսը, դրան հանդէպ, քարայրին ճակատը փորուած և կոկուած մեծ քառակուսի մը, և փորուածոյի աջ անկիւնը վերէն ծակեր կան ականցածն, յորմէ մարդ մը կրնայ իր ձեռքն երկնցնել. Եթէ արմունկդ կիսածալ ընես դէպ ի լանջը՝ գրեթէ նոյն ծակին ձևը կ'առնու, և այն դիրքով կրնայ մարդը իր թևը դնել այդ ծակին մէջ. - Ս. Մեսրովբայ դպրոց կ'անուանեն այս քարայրը, ըսաւ Տէր Մեսրովբն, և կ'աւանդեն թէ՝ այդ ծակէն ելած է ԹԱԹԸ և այս տաշածոյին վրայ գրեր է Ա. Բ. Գ.-: Արդարն երբ այդ տախտակին յառէր էր խոկալով Սուրբն իր ուշըն ու աչքը, պէտք էր որ այս անկեան ծակէն ելմէր թաթըն և գրեր «ոչ իբրև ի քուն երազոյ». այլ բացորշ յայտնութեամբ Աստուածային:

...Կան երկու այլ քարայրեր ալ, միոյն մէջ կը գտնուի ջրի հոր մը: Ասոնց մէջը խունկի և մոմի մովսերը սկցուցած են, մանաւանդ ճգնարանին, ուր բարեպաշտօն կանայք կ'երթան կ'աղօթեն իրենց զաւակաց համար:

- Աւելորդ է ըսել, թէ Ս. Մեսրովբ պատրաստ գտած է այս այր ու վայրը, որ իրմէն յառաջ ո՞վ զիտէ ի՞նչ նպատակի համար կոեր կոփեր են. դուրսի բնեռագիրն ալ մտածել կուտայ թէ՝ շատ հինուց գործ է, թերևս յիշատակարանաց դիւանը կազմելու մտքով տաշուած լինին. Եթէ այսպէս, զուգադիպութիւն մ'է Ս. Մեսրովբին²⁹:

Հայոց մեծ եղեռնից հետո հայրենակցական տարբեր միություններ տպագրեցին Պատմական Հայաստանի տարբեր նախանգներին, գավառներին և բնակավայրերին նվիրված հատորներ՝ հաջորդ սերունդներին փոխանցելու համար կորսված Երկրի գոմե պատմական հիշատակը: Եվ Ս. Մեսրովի այրը վերջին անգամ, որպէս ականատեսի, արդեն անց-

²⁹ Գարեգին վրդ. Սրբանձությանց, Թորոս աղբար ճամբորդ Հայաստանի, Կ. Պոլիս, 1884, լ. 154-155, 159-161, 162:

նող վերհուշ գտնում ենք Հարություն քհճ. Սարգիսյանի՝ Բալովին նվիրված տեղագրական-հուշագրական գործի հետևյալ հատվածում. «Զեթ գիտին արևմուտքը բարձրադիր լեռան մը զագաթը կը գտնուի Սուրբ Մարտուա, ուր գաւառին մէջ ապրող աւանդութեան մը համաձայն, Սուրբ Մեսրոպ աղօթած, ճգնած և հայ տառերը գտած է:

Ասիկա մասնաւոր մատուր չունի. իր բարձրաբերձ զագաթին վրայ իրարու կից երկու երեք քարուկիր սենեակներու կիսաւեր հետքերը կանգուն կը մնան, և զոյգ մը մէջիմէջ վիմափոր սենեակ լեռան զագաթէն՝ անոր հիւսիսային արևմտեան ուղղաձիգ կողին վըրայ, 7-8 մեղ աստիճաննոց սանդուղքով մը մատչելի: Այս սանդուխին գլուխը կը գտնուի մէկուկէս երկու մէջը բարձրութեամբ և մէկ մէթրէն աւելի լայնութեամբ բևեռագիր արձանագրութիւն մը»³⁰:

Այս ավանդությունը անգամ 19-րդ դարում այնքան նվիրական պատմական մի հիշատակ էր ընկալվում, որ Ալիշանը գրում է. «Ունի բերդ ամուր, յորում պատուի անձաւանման տեղի. ուր աւանդի Ս. Մեսրովայ ընկալեալ յաղօթս զօրինակ հայերէն տառից և ստեղծեալ զնոսին»³¹:

Այս ավանդության վավերականությունը դեռևս 18-րդ դարում մերժել է Հ. Մ. Չամչյանը: Վկայակոչելով Վարդան Արևելցու՝ Բալուին վերաբերվող հատվածը, Չամչյանը նշում է, որ Արևելցին դա բերում է որպես ժողովրդական ավանդություն և ինքն էլ իր հերթին ավելացնում է. «Եւ յիրակ իսկ ուսմկաց աւանդութիւն լինելոյ ապացոյց է այն, զի ասի, թէ վէմն այն, յոր դրոշմեցան տառըն Մեսրովայ՝ կայ մինչև ցայսօր, և երկին ի նմա նկարը գրերոյն, որ է զրոյց անտեղի. զի այն վէմ ի տեսլեան երևութացաւ պոաջի մտաց սրբոյն, և ոչ թէ էր քար թանձրացեալ յերկիր, որպէս և յայտ է: Եւ արդարն եթէ իրական վէմ լինէր, ոչ թողոյր Սուրբ Մեսրոպ զայն անդանօր, այլ՝ տայր բառնալ և տանիլ և պահել ի կաթողիկոսարանի և կամ արքայն Վոամշապուհ տայր բերել և դնել յարքունի պալատան յանջնջելի յիշատակ այսր գործոյ: Եւ դարձեալ, եթէ այնպիսի վէմ էր այն, Կորիւն, որ նմանեցուցանէ զուրբն Մեսրոպ Մովսեսի, և զտառ նորա պատգամացն գրելոց, սոյնպէս նմանեցուցանէր և զքարեղէն վէմն զայն՝ քարեղէն տախտակացն»³²:

Այսպիսով, Չամչյանը Բալուի այրի վեմի վրա որպես թե դրոշմված տառերի պատմությունը մերժում է՝ նշելով, որ ինչպես Խորենացին է գրում, Ս. Մեսրովին Հայոց գրերը տրվել են ոչ թե իրական վեմի վրա գծագրվելով, այլ տեսիլում, և տեսիլի հետ էլ աներևոյթ են դարձել: Եվ երկրորդ, որ եթե իրապես քարին դրոշմվեին հայոց գրերը, ապա Ս. Մեսրովը դրանք որպես աստվածատուր մի սրբություն իր հետ կըերեր և ոչ թե կթողներ Բալուում: Եվ երրորդ, քարեղէն տախտակի վրա գրերի գծագրման մասին հիշատակությունները գրական հետևողություն են Աստծո կողմից Մովսեսին տրված Տասնաբանյայի տախտակ-ների:

Գրերի Գյուտի՝ Բալուի ավանդության մասին Աճառյանն էլ գրում է. «Միակ պատմական աստառը, որ կարող է իբր հիմք ծառայած լինել այս ավանդության, թերևս մի կարճ

³⁰ Յարութիւն քին. Սարգիսեան, Բալու, իր սովորոյթները, կրթական ու իմացական վիճակը և բարբառ, Գահիր, 1932, լ. 263-264:

³¹ Հ. Վ. Ալիշան, Տեղագիր հայոց մեծաց, Վենեփիկ, 1855, լ. 65:

³² Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հգ. Ա, Վենեփիկ, 1784, լ. 762:

դադար է Մեսրոպի վերադարձի ժամանակ՝ Սամուսատից Վաղարշապատ»³³:

Նույն ձևով այս ավանդության պատմական հիմքը որոնելով, Հ. Մ. Հովհաննիսյանը գրում է. «Ս. Մեսրոպ պէտք է, որ Եղեսիա-Սամուսատ-Մելիտինե Խարբերդ-Բալու ճամբով մտած ըլլայ Հայաստան, այսինքն Արածանիի հովիտէն, ասիկա հոռոմէական հին և զլխատոր ճամբաներէն մէկն էր դեպի Հայաստան, որ Պետինգերեան քարտէսին վրա ևս նշանակուած է: Ս. Մեսրոպ այս ճամբէն անցնելով՝ կանգ առած պէտք է ըլլայ Բալու, մանաւանդ թէ ժամանակ մըն ալ հոն կեցած, ինչպէս որ ցոյց կուտան ԺԲ դարու մեր յիշած պատմիչները: Ահա այս անցքին պատճառու է, ըստ մեր ենթադրութեան, որ ծագում առած է ժողովուրդին քով Բալուի բերդին աւանդութիւնը հայ գրերու գիտին մասին»³⁴:

Հայոց գրերի՝ Բալուում տրված լինելու մասին մատենագրական աղբյուրների քննությունը, սակայն, վեր է հանում մի շարք օրինաչափություններ, որոնք վկայում են, որ այս ավանդությունը ոչ այնքան խարսխված է Մաշտոցի՝ այս ճանապարհով Հայաստան վերադած լինելու վրա, այլ հիմնված է Գրերի Գյուտի պատմությունը ազգային-հոգևոր մի նոր վերամեկնաբանմամբ ներկայացնելու ձգտման վրա: Այս հանգամանքը միանգամայն հստակորեն արտացոլվել է Սասնեցու ներբողյանի այն հատվածում, ուր ասվում է, թե աստվածային նախասահմանվածությամբ էր, որ Միջագետքի քաղաքներում տեղի չունեցավ Հայոց Այրութենի կարգավորումը:

Ինչպես Սասնեցին է գրում «Եւ այս ի խնամոցն Աստուծոյ մատակարարէր, ոչ ամենայնի առնել զմեզ մուրացիկս՝ շնորհակալս այլոց. զբովանդակ պարզեսն ի ձեռսն այլազանից շնորհել մեզ՝ որպէս զառքելութիւնն, զքահանայութիւնն և զարքայութիւնն, այլ պահէր զայսպիսի բարիս և մերով արեան զանկի[ած]նով ձիրէր մեզ»³⁵:

Ընդգծված այս տողի բացատրությունում Հ. Մ. Հովհաննիսյանը գրում է. «Այսինքն իրէա էին առաքեալները՝ Թաղէուը և Բարդուղիմէուը, Պարթև Լուսաւորիչը և Արշակունի Վաղարշակը»³⁶: Եվ այս երեքի կողքին, Գրերի Գյուտը, ըստ Սասնեցու, վերապահված էր Ս. Մեսրոպին և այն էլ արդեն Հայաստանի սահմանագավառ Բալուում, այսինքն բուն Հայաստանում, որով Գրերի Գյուտը միջնադարյան ազգային ինքնագիտակցությունում սկսում է ընկալվել որպես զուտ հայկական երևոյթ, որն էլ իր հերթին կատարվել է բուն Հայաստանում և ոչ թե նրանից դուրս:

Փարպեցին ժամանակագրորեն հաջորդում է Կորյունին և Խորենացուն, ու Գրերի Գյուտը Հայաստանում դնելու միտումով է, որ թերևս նա չի հիշում բուն գյուտի պատմությունը և կամ էլ նույն միտումով են նրա Պատմության այս հատվածը ոչ այնքան հաջող խմբագրել հետագա խմբագիր-գրիչները, որով այն տպավորությունն է ստեղծվում, թե Ս. Սահմակը և Ս. Մեսրոպը հայոց գրերը կարգավորել են հենց Հայաստանում: Հատկանշական է, որ Եվրոպական հայագետներից Մարկվարտը Փարպեցու այս հատվածը հենց այդպես էլ հասկանալով գրում է. «Մաշտոցի Ասորիք՝ այսինքն Միջագետք ուղեգնացութիւնը ու յարակից պարագաները կը լոէ Ղազար ամբողջովին: Այս՝ դիտումնաւոր փոփոխութիւն

³³ Ռ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 151:

³⁴ Հ. Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Ս. Ղազար, 1970, էջ 95:

³⁵ Կարապետ Սասնեցի, Ներքոյան, էջ 42:

³⁶ Հ. Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, էջ 96:

մըն է, որ կապ ունի հարկաւ Ղազարա ցոյց տուած այն չափազանց ջանքին հետ, որով ո՞չ միայն Ս. Գրոց թարգմանութեան, այլև նոյնիսկ հայ գրերու կազմակերպութեան զիսաւոր արդիւնքը կը դիտէ վերագրել Սահակա, որով յափշտակուած է, այս պատճառով ալ, ինչպէս բնական է, դէպքիս հանդիսավայրը հարկ է փոխադրել Հայաստան»³⁷:

Գրերի գյուտի՝ Բալուի ավանդության մեջ վերախմբագրման է ենթարկվել նաև տեսիլի պատմությունը: Եթե Պատմահայրը գրում է, որ տեսիլում Աստվածային Աջը վեմին գրեց հայոց գրերը, ապա Բալուի ավանդությանը հետևող հեղինակները արդեն գրում են, որ այդ գրերը դրոշմվեցին Բալուի այրի պատին, որով առավել է շեշտվում Հայոց գրերի աստվածատուր լինելը՝ այն ներկայացնելով արդեն առարկայական նյութականությամբ, ոչ թե տեսիլատուր՝ տեսիլում տրված, այլ անմիջականորեն Աստծո կողմից: Ասվածն առավել հստակ է երևում, երբ իրար կողք ենք դնում տեսիլի՝ Պատմահոր և Վարդան Արևելցու հատվածները:

Մովսես Խորենացի	Վարդան Արևելցի
Եւ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթանութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգույն աչաց թալթ ձեռին Աջոյ՝ գրելով ի վերա վիմի:	Աջով իրով դրոշմեալ առաջի նորա, որպէս մեծին Մովսեսի ի լեռոն Սինայ, և ամա ի լեռոն Բալուայ, որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարը գրերոյն:

Բալուի ավանդությունում կան Խորենացու և Կորյունի վկայություններից տարբերվող ևս երեք էական նրբերանգներ, որոնք նույնպէս պայմանավորված են Հայոց գրերի աստվածատուր լինելը առավել հստակ և առարկայորեն ներկայացնելու ձգտմամբ:

Ըստ առաջին այս տարբերության, Հայոց գրերը տրվել են ոչ թե պարզապէս Բալուում, այլ նրա մոտ գտնվող լեռան վրա, և ինչպէս երևում է արդեն բերված հիշատակություններից, այս լեռը զուգահեռի մեջ է դիտվում Սինա լեռան հետ, որ Մովսեսին տրվեց Տասնաբանյան, որով Հայոց գրերի աստվածատուր լինելը շեշտելու համար ստեղծվում է նաև գյուտի տեղագրական ընդհանրությունը:

Նույն այս նպատակով վերախմբագրման է ենթարկվում նաև Մովսես-Մեսրոպ գուգահետը: Կորյունի մոտ եթե այս զուգահեռ հանգում էր այն մտքին, որ Հայոց գրերը ստացած Մեսրոպը երջանիկ էր իր վերադարձին, քանի որ ընդունվեց Հայոց ավազանու և ժողովրդի կողմից, իսկ Տասնաբանյան բերող Մովսեսը տրտմեց, որովհետև վերադառնալով Սինա լեռից, տեսավ ուկե հորթին երկրպագող ժողովրդին:

Հայոց գրերի աստվածատուր բնույթի հետագա ընդգծումը թելադրել է այս համեմատության տարբերությունը ընդհանրության վերածել, և Բալուի ավանդության մեջ արդեն ոչ թե հոգեվիճակների տարբերությունն է ներկայացվում, այլ գյուտի իրավիճակային ընդհանրությունը, որով երկուսին էլ աստվածատուր պարզեց տրվեց լեռան վրա, և Ս. Մեսրոպը այնտեղից եկավ՝ իր հետ բերելով Հայոց գրերը այնպէս, ինչպէս Մովսեսը Սինա լեռից

³⁷ Պատմութիւն հայ նշանագրերու, լ. 35:

Տասնաբանյան:

Երրորդ տարրերությունն այն է, որ Գրերի Գյուտը Բալուում ներկայացնող բոլոր հեղինակները նշում են, որ Ս. Մեսրոպը ոչ թե ստեղծել է ընդհանրապես Հայոց Այբուբենը, այլ պակասող այն տառերը, առանց որոնց թերի և անկենդան էր այդ Այբուբենը: Հատկանշական է, որ այդ գործերում ասվում է, թե Մաշտոցին տրվել են ձայնավորները, որոնք յոթն են եղել, և կամ էլ ասվում է, թե տասնչորս գրեր են տրվել, որը դարձյալ հավասար է երկու յոթի:

Այս հանգամանքը ևս պայմանավորված է Հայոց Այբուբենի աստվածատուր լինելը շեշտելու նույն ձգտմամբ: Ինչպես նշվում են միջնադարյան քերականագիտական աշխատանքներում, ձայնավորները անընդհատ լինելով՝ առանց ընդհատման հնչելով անցյութական են և ըստ այդմ աստվածային բնույթ ունեն, իսկ բաղաձայնները ընդհատվող հընչում ունեն, ուստի և մարդկային մահկանացու բնության նման մարմնավոր և նյութական են:

Նաև, ինչպես հայտնի է, յոթը աստվածության թիվ է համարվել սկսած պյութագորականներից, որը հոգևոր մի նոր վերամեկնաբանմամբ արտահայտվել է և քրիստոնեական միջնադարում: Նույն այս պատճառով հայերենում յոթի գրային համարժեքն է Է-Ա, որը խորհրդանշում է աստվածությունը³⁸:

Ահա այս պատճառով Բալուի ավանդությունը ներկայացնող գործերում երբ ասվում է, թե Ս. Մեսրոպին տրվեցին ձայնավորները և կամ էլ յոթ գրերը, դրանով մեկ անգամ ևս շեշտվում է տրված գրերի աստվածային բնույթը, թե՛ որպես ձայնավոր գրերի և թե՛ դրանց աստվածայինը խորհրդանշող յոթը լինելով:

Այսպիսով, Բալուի ավանդությունը ոչ թե խարսխված է պատմական որևէ հիմքի վրա, այլ Գրերի Գյուտի պատմության ազգային վերախմբագրումն է կատարված միջնադարում, որի բուն նպատակն է եղել Գրերի Գյուտը ներկայացնել կատարված Պատմական Հայաստանի տարածքում: Բալուի՝ որպես Գյուտի տրման տեղը ներկայացնելը պայմանավորված է եղել երկու հանգամանքով: Նախ որ այն արդեն պատմական Հայաստանի սահմանային գավառներից էր, այսինքն՝ Հայաստան էր համարվում, և որ այնտեղ եղած բնեուագիր արձանագրությունը որպես հնից եկած պաշտամունքային վայր նորովի վերիմաստավորմամբ որպես գրման քար ներկայացվում է աստվածատուր գրերի գրման սալ և աստվածատուր լինելու ըմբռնումը արտահայտվում է նաև այն մեկնաբանությամբ, թե Մաշտոցին տեսիլքում տրվել են անցյութական՝ աստվածային բնույթ ունեցող ձայնավորները, որոնց աստվածատուր լինելու հաջորդ հատկանիշն էլ այն է, որ դրանք, լինելով յոթը, խորհրդանշում են աստվածության յոթ թիվը և գրային համարժեքը:

³⁸ Ձայնավորների անցյութական լինելու և յոթի պարունակած այլարանուկան խորհուրդների ու ասդվածային թիվ լինելու մասին փես Գ. Պողոսյան, Դասինյան գրերի հարցը միջնադարյան բնագիրական ըմբռնումների փեսանկյունից, «Էջմիածին», 2005, Զ, էջ 87-98, Է-Ը, էջ 110-125: